ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

375069 ք.Երևան Դրոյի -17
հեռ. 24-00-23

МЭРИЯ г.ЕРЕВАНА
«ПОЛИКЛИНИКА N16» ЗАО

375069 г. Ереван ул. Дро-17
тел. 24-00-23

N 842
«20» 08 2014թ.

**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին**

ԵԹՊՎ16Պ-ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ԵԹՊՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 17, 28 սենյակ հասցեով, Գ. Վարդանյանին (հեռ. 010 24-58 01), մինչև 2014թ. օգոստոսի 29-ը, ժամը 14:00-ն:

Հայտերը կբացվեն Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Դրոյի 17 հասցեում, 28 սենյակում, 2014թ. օգոստոսի 29-ը, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերումը, որը կազմված է 3 չափաբաժնից: Ապրանքի գնման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը(օրինակելի ձևերը կցվում են):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ